

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Անցնող Մայիս ամսուն՝ Առաջնորդարանի դիւանէն կը տեղեկացուէր թէ Ազգ. Կեդր. Վարչութեան մէջ որոշուած է որ այս տարի, բովանդակ թեմին մէջ, իւրաքանչիւր համայնքի կողմէ, պատշաճ շուքով եւ հանդիսութեամբ տօնուի Առաջնորդարանի հաստատման յիսնամեայ տարեդարձը: Կը յայտնուէր նաեւ թէ՛ կազմուած է 17 անձերէ բաղկացեալ Յոբելիական յատուկ Յանձնաժողով մը, Առաջնորդ Սրբազանի նախագահութեամբ, կազմակերպելու տօնակատարութեան աշխատանքները, պատրաստելու ընդհանուր ծրագիր եւ համայնքներուն տալու անհրաժեշտ դիւրութիւններ:

Տօնակատարութեանց կապակցութեամբ՝ Յոբելիական Յանձնաժողովս իր կատարած աշխատանքներէն եւ կարգադրութիւններէն հետեւեալները կը փափաքի հաղորդել ժողովրդեան ի գիտութիւն:

- Տօնակատարութեան հանդիսութեանց յատկացուած են յառաջիկայ Հոկտեմբեր եւ Նոյեմբեր ամիսները: Կը նշանակէ որ ամէն համայնք միայն այդ երկու ամիսներէն յարմար Կիրակի մը պէտք է ընտրէ եւ կատարէ տօնակատարութիւնը:

- Կեդրոնական Յանձնաժողովը կը յանձնարարէ տեղական Յանձնախումբերուն որպէսզի շանան տօնակատարութիւնները մատչելի դարձնել ժողովրդական լայն խաւերուն՝ սարքելով հրապարակային հանդէսներ, նաեւ ճաշկերոյթ եթէ կարելի է:

- Հանդէսներուն մէջ ցուցադրուելու է Հայաստանի տեսարաններու գունաւոր ժապաւէնը, որուն նաեւ միացուած պիտի ըլլան մեր թեմի եկեղեցիներու տեսարանները:

Հայաստանի տեսարաններու այս գունաւոր շարժապատկերը՝ միակն է իր տեսակին մէջ, նկարուած 1945-ին Ս. Եջմիածնի մէջ գումարուած Ազգային-եկեղեցական ժողովին առթիւ:

- Տօնակատարութեանց գեղարուեստական բաժինները ըլլալու են առիթին պատշաճ ու վայելուչ, եւ որպէսզի այդ գործը դիւրանայ, Կեդրոնական Յանձնաժողովս կը պատրաստէ արտասանութեանց եւ երգերու յատուկ գրքոյկ մը, որ շուտով լոյս կը տեսնէ եւ պիտի տրամադրուի տեղական Յանձնախումբերուն, որ արուեստագէտները իրենց ընտրութիւններէն անկէ կատարեն:

- Կեդրոնական Յանձնաժողովս լոյս կ'ընծայէ նաեւ ուրիշ գրքոյկ մը, Հայերէն եւ Անգլերէն, ուր ամփոփ ներկայացուած են Առաջնորդարանի կազմութեան եւ կէս դարու ընթացքին անոր կատարած կրօնական, մշակութային եւ ազգապահպան ծառայու-

Թիւնները: Ինչպէս նաեւ ժամանակագրական կարգով նշուած են կարեւոր թուականներ՝ Առաջնորդարանի պատմութեան մէջ:

- Յանձնաժողովս պատրաստել կուտայ նաեւ Տօնակատարութիւնը խորհրդանշող գունաւոր եւ գեղեցիկ զարդակոճակներ, որոնք պիտի ցրուին *Լուսակոյտի,*  
*Իր Ժաշարում =*  
Վերոյիշեալ պատմութեան գրքովն ու զարդակոճակներէն ի մօտոյ պիտի ղրկուին համայնքներուն եւ տեղեական Յանձնախումբերուն, հանդէսներու մէջ եւ այլուր օգտագործելու համար:

Յօրէլինական տօնակատարութենէն անկախաբար, Առաջնորդարանը կը հրատարակէ տարեգիրք մը՝ "Պատմութիւն եւ Վիճակացոյց" անուամբ, մօտ երեք հարիւր էջերով, երկու հարիւրէ աւելի նկարներով, գեղեցիկ հատոր մը որ կը բովանդակէ ամբողջ թեմին՝ Առաջնորդարանին եւ անոր ենթակայ համայնքներուն մանրամասնեալ պատմութիւնն ու կարեւոր վիճակագրական տեղեկութիւնները:

Յանձնաժողովս պատշաճ կը նկատէ եւ կարեւորութեամբ կը յանձնարարէ որպէսզի տօնակատարութեանց ընթացքին շանք թափուի եւ զարկ տրուի այս հրատարակութեան սպառումին ալ:

Յօրէլինական Կեդր. Յանձնաժողովս՝ սոյն հաղորդագրութեամբ կը խնդրէ ամբողջ Ամերիկահայ գաղութի մեր ազգայիններէն նկատի ունենալ այս տօնակատարութիւնը եւ զօրավիճ հանդիսանալ անոր կատարեալ յաջողութեան:

Մինչեւ տօնակատարութեան վերջաւորութիւնը հետեւեցէք <sup>հաս</sup> մամուլին, ուր պարբերաբար պիտի երեւին յօդուածներ, թղթակցութիւններ եւ հաղորդագրութիւններ:

Ամերիկայի Հայոց Առաջնորդարանի Հաստատման  
Յիսնամեայ Յօրէլեանի Կեդր. Յանձնաժողով

Սեպտեմբեր 7, 1949